



*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների  
իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում*

*Առարկան՝ դասվար*

*Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Մուրադյան*

*Ուսումնական հաստատություն՝ Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական  
դպրոց*

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1 Գործնական աշխատանքների տեսակները , կազմակերպման մեթոդները, իրականացման ուղղիները	
1.1 Գործնական աշխատանքների տեսակները.....	5
1.2 Գործնական աշխատանքների կազմակերպման մեթոդները և ուղղիները.....	9
Գլուխ 2 Գործնական աշխատանքի կազմակերպումը և իրականացումը <<Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դասավանդման գործընթացում	
2.1 Գործնական աշխատանքի կազմակերպումը.....	11
2.2 Գործնական աշխատանքի մշակումը և իրականացումը մեդիառեսուրսների կիրառմամբ.....	13
Եզրակացություն.....	18
Գրականության ցանկ.....	19

## Ներածություն



**Արդիականությունը:** Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման և գիտելիքների մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ: Չնսեմացնելով տեսական հիմնարար գիտելիքների դերը՝ կրթության մեջ մեծ կարևորություն են տալիս ուսուցման պրակտիկ ուղղվածությանը: Ուշադրություն դարձնել այն գիտելիքներին ու կարողություններին, որոնք, ենթադրվում է, որ կիրառություն կգտնեն *գործնական* կյանքում: Ուսուցման պրակտիկ ուղղվածությունը կարևորվում է ոչ միայն ստացած գիտելիքների մնայունության ապահովման և կենսական տարբեր իրադրություններում նրանց կիրառման տրամաբանությամբ, այլ նաև սովորողների մեջ կայուն ուսումնական մոտիվացիա ձևավորելու անհրաժեշտությամբ:

Աշակերտների մեջ նման կարողության (գործնական կարողության) առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև աշակերտների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս:

**Հետազոտության նպատակը-**

- զարգացնել աշակերտների գործնական կարողությունները և հմտությունները <<Ես և շրջակա աշխարհը>>առարկայի դասավանդման ընթացքում:

**Հետազոտության խնդիրները.**

- Ուսումնասիրել գործնական աշխատանքների իրականացման մեթոդաբանությունը, տեսակները և դրանց ազդեցությունները սովորողի կիրառական հմտությունների զարգացման վրա:
- Կիրառել գործնական աշխատանքները Ես և շրջակա աշխարհը առարկայի ուսուցման գործընթացում և գնահատել գրանցած արդյունքները:

**Հետազոտության մեթոդները.**

- գրական տվյալների հավաքագրում և ուսումնասիրում,
- գնահատում,
- մանկավարժական փորձարկում:

**Աշխատանքի տեսական նշանակությունը**

- կարելի է կիրառել տարբեր առարկաների ուսուցման գործընթացում որպես մեթոդաբանական օգնություն:

## **Գլուխ 1 Գործնական աշխատանքների տեսակները , կազմակերպման մեթոդները, իրականացման ուղղիները**

### **1.1 Գործնական աշխատանքների տեսակները**

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- *վերարտադրողական*, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),
- *մասամբ որոնողական*, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),
- *ստեղծագործական*, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում արյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

### *Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքներ*

Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում: Դրանք գնահատման ենթակա չեն:

### *Տեսական գիտելիքը հիմնավորող և ամրապնդող գործնական առաջադրանքներ*

Այս խմբի մեջ կարելի է դասել բոլոր այն առաջադրանքները, որոնք կարող են նպաստել այս կամ այն տեսակի հմտության ձևավորմանը (թվաբանական գործողությունների կատարում, հանրահաշվական արտահայտությունների ձևափոխում և պարզեցում, տրված նախնական պայմաններին բավարարող մոդելների պատրաստում, երկրաչափական պարզագույն կառուցումների վրա հենված խնդիրներ, շրջապատող առարկաների բնութագրիչների չափում և դրանցով պայմանավորված հաշվարկներ և այլն):

### *Չետազոտական բնույթի գործնական առաջադրանքներ*

Այս խմբի մեջ կարելի է դասել այն առաջադրանքները, որոնց կատարումը պահանջում է ինքնուրույն հետազոտության իրականացում, երևույթների կամ օբյեկտների հատկությունների, օրինաչափությունների, փոխադարձ կապերի բացահայտում և մաթեմատիկական հիմնավորում: Նման առաջադրանք հանձնարարելիս որպես հուշվածք կարելի է տալ երևույթի կամ օբյեկտի զգացական ընդհանուր մեկնաբանությունը, նրանում նկատվող որոշակի օրինաչափությունները: Ուսուցիչը պետք է հնարավորություն տա աշակերտին գործնական և հետազոտական աշխատանքների միջոցով գտնել իր հարցի պատասխանը: Նման դեպքերում աշակերտը ստանձնում է ակտիվ մտածողի, հետազոտողի դեր: Աշակերտը պետք է, որքան հնարավոր է, ինքնուրույն աշխատանքի մեծ փորձ ձեռք բերի:

Բայց, եթե նա միայնակ թողնված է խնդրի հետ՝ առանց որևէ օգնության, կամ, եթե այդ օգնությունը անբավարար է, ապա դա կարող է ոչ մի օգուտ չտալ նրան: Եթե ուսուցչի օգնությունը չափից ավելի է, ապա ոչինչ չի մնա աշակերտին անելու: Ուսուցիչը պետք է օգնի, բայց ոչ չափազանց շատ և ոչ չափազանց քիչ: Պետք է օգնել այնպես, որ աշակերտին մնա աշխատանքի խելամիտ բաժինը: Նման պարագայում աշակերտը ներգրավվում է ինքնուրույն աշխատանքի մեջ, դուրս է գալիս պասիվ լսողի դերից և ստանձնում ակտիվ մտածողի դեր: Եթե անգամ աշակերտի ուժերից վեր է կատարել ավելին, ապա ուսուցիչը ծայրահեղ դեպքում պետք է ստեղծի ինքնուրույն աշխատանքի պատրանք: Նշանակում է ուսուցչի օգնությունը պետք է լինի զգույշ և չափավոր: Գերադասելի է, որ ուսուցիչը տեսնի դժվարությունների աղբյուրը, հարց տա կամ ցույց տա այն քայլը, մինչև որը աշակերտը կկարողանա եզրակացության գալ ինքնուրույնաբար: Պետք է դասը հետաքրքիր դարձնելով օգնել աշակերտին՝ ուսուցման գործընթացում ձեռք բերելու ինքնուրույնություն, հանդես բերել նախաձեռնություն, սովորեցնել: Օրինակ, եռանկյունների նմանության թեման ուսումնասիրելիս կարելի է հանձնարարել, որ աշակերտը տեսրում գծի համապատասխանաբար հավասար անկյուններով մի քանի եռանկյուններ, հաշվի դրանցից յուրաքանչյուրի կողմերը գրանցի եռանկյունների համապատասխան կողմերի երկարությունները աղյուսակում:

Ուսումնական առարկայի բովանդակության առանձնահատկություններով են պայմանավորվում տեսության և պրակտիկայի կապերի ձևերը: Այդ կապերը բացահայտելու տրադիցիոն միջոց են (նաև գործնական աշխատանքի տեսակ) էքսկուրսիաները, զանազան լաբորատոր աշխատանքները, որոշակի պրակտիկ գործողությունների իրականացում պահանջող հանձնարարություններն ու առաջադրանքները (իրերի և նրանց մոդելների պատրաստում, կենցաղային իրավիճակներում հաշվարկների կատարում, բնական որևէ երևույթի դիտում ու մեկնաբանում և այլն): Գործնական աշխատանքները կազմակերպելիս չպետք է անտեսել նաև աշակերտների ունեցած անձնական փորձը:

Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

- Նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,
- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

---

• Կ. Թորոսյան, Կ. Չիրուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, Զանգակե հրատարակչություն, 2014 թ., էջ 65.

• Խստովիկա Ն. Բ., Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2000, էջ 42

• Общие основы педагогики, (под ред Б П Есипова), М, 1967, стр ,89, 2 Е. Я. Голант, Е. И.

• Петровский, Классификация методов обучения, М .,1964, стр. 72, 3И. Я. Лернер, М. Н. С

• каткин, Методы обучения, М .,1994, стр. 56,



## 1.2 Գործնական մեթոդները և դրանց կազմակերպական ուղղիները

Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո: Դրանք կրում են ընդհանրացնող բնույթ: Վարժություններն իրենց բնույթով բաժանվում են բանավոր, գրավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային վարժությունների, գործնական աշխատանքների (օրինակ՝ Մանկավարժությունե-ից): Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք, որոնք փոխկապակցվում են՝ կանխանշած նպատակին հասնելու համար: Սրանք կատարվում են ուսումնական

բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի բոլոր փուլերում: Բոլոր տեսակի վարժությունների բնույթը և մեթոդիկան կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից: Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ.

1. առաջադրանքի պլանավորում,
2. առաջադրանքի կատարում,
3. կատարման ընթացքի խթանում,
4. վերահսկողություն,
5. կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, թերությունների, սխալների հայտնաբերում:

Գործնական մեթոդների շարքում են՝

1. Վարժություններ
2. Գործնական աշխատանքներ
3. Լաբորատոր աշխատանքներ
4. Ճանաչողական խաղեր :

Ժամանակակից աշակերտին անհրաժեշտ են ոչ միայն տեսական գիտելիքներ տարբեր առարկաներից, այլ նաև այդ գիտելիքները աշխատանքային և հոգևոր

գործունեության տարբեր ոլորտներում կիրառելու պրակտիկ կարողություններ ու հմտություններ:

➤ **Վարժություններ**

Վարժությունների մեթոդի դեպքում սովորողները բազմիցս կատարում են միևնույն գործողությունները, այսինքն վարժվում են յուրացված տեսական նյութը պրակտիկայում կիրառելու մեջ, դրանով իսկ խորացնելով իրենց գիտելիքները, ձեռք բերելով համապատասխան կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև զարգացնելով իրենց մտածողությունն ու ստեղծագործական ընդունակությունները: Կարող են լինել բանավոր կամ գրավոր վարժություններ, պրակտիկ առաջադրանքներ տեխնոլոգիայից և այլն:

➤ **Գործնական աշխատանքներ**

Գործնական աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան ձեռք բերած գիտելիքների կիրառումն է գործնական խնդիրների լուծման ընթացքում: Այն նաև լուծում է սովորողների գիտելիքների խորացման ու ամրապնդման խնդիրը: Աշակերտների կողմից գործնական աշխատանքների անմիջական կատարմանը նախորդում է ուսուցչի բացատրությունը, որը նպատակ ունի տեսականորեն իմաստավորել աշխատանքը և գործողությունների շարքի ցուցադրումը: Դրանից հետո աշակերտները կատարում են աշխատանքը, իսկ ուսուցիչը վերահսկում է նրանց գործողությունները:

➤ **Լաբորատոր աշխատանքներ**

Լաբորատոր աշխատանքների մեթոդի հիմնական ֆունկցիան սովորողների մեջ գիտափորձարարական հետազոտական աշխատանքի տարրական կարողություններ ձևավորելն է: Լաբորատոր աշխատանքները սովորեցնում են աշխատել տարատեսակ սարքերի և նյութերի հետ, ձևավորում են չափումներ, հաշվարկներ կատարելու, փորձի արդյունքներն ամփոփելու, վերլուծելու և եզրակացություններ անելու կարողություններ:

➤ **Ճանաչողական խաղեր**

Որպես ուսուցման մեթոդ խաղը իրականության մոդելավորման մի ձև է, հատուկ կազմակերպված իրադրություն, որից սովորողներին առաջարկվում է ելք գտնել

<https://multiurok.ru/files/gortsnakan-met-od.html> :

## Գլուխ 2

### Գործնական աշխատանքի կազմակերպումը և իրականացումը <<Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դասավանդման գործընթացում

#### 2.1 Գործնական աշխատանքի կազմակերպումը

Գործնական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել գործնական աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Զատկապես տարրական դասարաններում գործնական աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ գործնական աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և, վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորվում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը.

- Գործնական աշխատանքները բազմազան են . պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, տեսածի, լսածի ներկայացում ամենատարբեր միջոցներով, որը կարող է լինել պաստառ, սահիկ և այլն:
- Գործնական աշխատանքները կարող ենք իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով, ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:

Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթացքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը: Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում գործնական աշխատանքը, եթե , իհարկե, աշխատանքն ունի անհատական բնույթ: Գործնական աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

## **2.2 Գործնական աշխատանքի մշակումը և իրականացումը մեդիառեսուրսների կիրառմամբ**

*Գործնական աշխատանքը իրականացվել է Ալ. Բլոկի անվան 122 հիմնական դպրոցի 3-րդ դասարանի աշակերտների հետ:*

**Դասարան՝ 3-րդ**

**Առարկան՝** Ես և շրջակա աշխարհը

**Թեման՝** ,Բնությունը տարվա տարբեր եղանակներին: Տարվա եղանակներ

**Դասի նպատակները՝**

**Ուսուցողական-** ծանոթացնել տարվա եղանակներին, դրանց առաջացման և հերթափոխի պատճառներին, ներկայացնել, բացահայտել յուրաքանչյուր եղանակին բնորոշ առանձնահատկությունները:

**Դաստիարակչական** – դաստիարակել գնահատող վերաբերմունք բնության նկատմամբ, ձևավորել աշխարհի գիտական պատկերը ամբողջական ընկալելու գիտակցություն,

**Ձարգացնող** – ընդլայնել տարվա եղանակների մասին գիտելիքների համակարգը, զարգացնել ՏՀՏ միջոցներից և մեդիառեսուրսներից նպատակային օգտվելու, վերլուծելու և համադրելու կարողությունները, սովորողների դիտողականությունը, ձևավորել համագործկցելու մշակույթը:

**Դասի խնդիրները .**

- համակարգել և խորացնել տարվա եղանակների մասին սովորողների ունեցած գիտելիքները, ձևավորել տարրական գործնական հմտություններ և մեդիակարողություններ /մեդիատեքստեր կարդալու և ընկալելու, վերլուծելու, համադրելու և այլն/,
- զարգացնել կրտսեր դպրոցականի բանավոր խոսքը, սեփական կարծիքը ներկայացնելու, հիմնավորելու, բացատրելու կարողություններ,
- ձևավորել վերլուծելու, համեմատելու, ստեղծագործելու, կոլեկտիվում աշխատելու հմտություններ,
- ձևավորել տեղեկույթի ընտրության, հավաքագրման, փոխանցման կարողություններ:

**Դասի կահավորումը-** լուսացրիչ (պրոյեկտոր), համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ, թեմային վերաբերող նկարներ, աղյուսակներ, գծապատկերներ, կենդանի և անկենդան բնության տարրեր, սահիկահանդես, տեսանյութեր:


## Դասի ընթացքը

**Կազմակերպչական մաս** – հաճախման հաշվառում

**Նախապատրաստական գրույց:**


Ուսուցիչը խոսում է բնության մեջ առկա անտեսանելի փոխադարձ կապերի, բնական օրենքների ու օրինաչափությունների մասին, բացահայտում և հիմնավորում է դրանց դերը տարվա եղանակների առաջացման գործում: Այնուհետև խելացի գրատախտակի օգնությամբ ներկայացվում է բնության ամբողջականությունը պատկերող գծանկար:

Սովորողները այն լրացնում են ինքնուրույն:




Այնուհետև ուսուցիչը սովորողների հետ միասին վերլուծում է գծանկարը՝ կարևորելով սովորողների կողմից բնության ամբողջական գիտական պատկերի ընկալումը: Այս հասկացությունը համարվում է <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի առանցքային հասկացությունը: Առավել խորությամբ և տրամաբանական կապերի տեսանկյունից այդ հասկացության յուրացման համար ուսուցիչը նախորդ դասին երեխաներին բաժանել էր դերեր, որոնց մասին ինքնուրույն կամ ծնողների օգնությամբ նրանք պետք է համացանցում որոնեին որոշակի տեղեկույթ և սովորեին:


Սահիկի ցուցադրումից հետո, յուրաքանչյուր երեխա ներկայացնում է իր դերը, պատմում նրա առանձնահատկությունների, բնության մեջ, մարդու կյանքում նրա ունեցած նշանակության մասին: Ձեռք բերված տեղեկությունները ուսուցչի ուղղորդմամբ հաջորդաբար ներկայացնելով՝ սովորողները բացահայտում են մարդու, կենդանի և անկենդան բնության միջև գործող փոխադարձ կապերը:



Չնայած բնությունը գործում է որպես կայուն համակարգ, այնուամենայնիվ, բնության մեջ տեղի են ունենում մի շարք փոփոխություններ՝ գիշերվա և ցերեկվա, տարվա եղանակների հերթափոխումը և այլն: Տեսապատկերի միջոցով ներկայացվում է այդ հերթափոխերի առաջացման պատճառները, մեկնաբանվում բնության մեջ տարվա եղանակներին հատուկ փոփոխությունները:



**ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՊՏՈՒՅՏԸ ԱՐԵԳԱԿԻ ՇՈՒՐՁ ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐ**



**Հաղորդած նյութի ամրապնդում:** Պարզելու համար թե սովորողներն որքանով են յուրացրել տեսական նյութը ուսուցիչը սահիկի օգնությամբ ներկայացնում է հարցերը.

**ՁԵՌՔ ԲԵՐԱՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ**

- ❖ Ի՞նչ դեր ունի բնությունը մարդու կյանքում:
- ❖ Տարին քանի՞ եղանակ ունի: Անվանի՞ր դրանք:
- ❖ Ո՞րն է տարվա եղանակների առաջացման գլխավոր պատճառը:
- ❖ Ինչպե՞ս են առաջանում գիշերը և ցերեկը:
- ❖ Ի՞նչ նշանակություն ունեն տարվա եղանակները մարդկանց և կենդանիների համար:
- ❖ Որո՞նք են տարվա յուրաքանչյուր եղանակում նշվող տոներ:
- ❖ Բնության մեջ ինչպիսի՞ փոփոխություններ են դիտվում ողջ տարվա ընթացքում :

Հարցերի օգնությամբ ամփոփումից հետո նպատակահարմար է խմբային աշխատանքի իրականացումը: Այս թեմայի դասավանդման շրջանակներում մենք առաջարկում ենք մեղիառեսուրսների օգտագործմամբ խմբային աշխատանքի մի քանի տարբերակներ: Հաշվի առնելով դասարանի մակարդակը,



Նյութատեխնիկական ապահովվածությունը, սովորողների մեղիագրագիտության աստիճանը՝ ուսուցիչն ինքը կարող է ընտրել, թե որ տարբերակը առավել արդյունավետ կլինի տվյալ իրավիճակում:

**Խմբային աշխատանք** :Լրացնել աղյուսակը՝ նշելով թե ինչ փոփոխություն են դիտվում տարվա տարբեր եղանակներին: Ընտրել բանաստեղծություններ, երգեր, պատմություններ, ռեբուսներ, ինչպես նաև պատրաստել տարվա տարբեր եղանակներին, կենդանիներին և բույսերին վերաբերող սահիկաշար:

Դասարանը բաժանվում է 4 խմբի՝ **գարուն, ամառ, աշուն, ձմեռ**: Յուրաքանչյուր խումբ ունի իր աշխատանքային համակարգիչը, որտեղ ուսուցիչը նախօրոք ներբեռնել է աշխատանքի համար նախատեսված կայքերի հղումները: Ներկայացված աղյուսակի համապատասխան բաժինը լրացնելու համար խմբերը պետք է կարողանան ընտրել մեղիատեքստերը, հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը, վերլուծել և համադրել:

### ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐ

	ՏԱՐԴ	ԲՈՒՅՍԵՐ	ԿԵՆՂԱՆԻՆԵՐ
ԳԱՐՈՒՆ			
ԱՄԱՌ			
ԱՇՈՒՆ			
ՁՄԵՌ			

### ՎԱՅՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՎԻ ԲՈՒՅՍԵՐ

Վայրի բույսեր	Մշակովի բույսեր

Խմբային աշխատանքի կատարման համար անհրաժեշտ էլեկտրոնային ռեսուրսները.

- ❖ <https://www.aravot.am/2016/03/04/664219/>Տարվա եղանակները (պատմվածք)
- ❖ [https://www.youtube.com/watch?v=3DW0\\_fhqUjI/](https://www.youtube.com/watch?v=3DW0_fhqUjI/)Սովորում ենք տարվա եղանակները/
- ❖ <http://pogrik.am/verexanerin/> Մանկական ռեբուսներ. տարվա եղանակներ
- ❖ <https://mocak.am/24792/5-հրաշալի-երգ-գարուն-մասին/>
- ❖ <https://mocak.am/4161/բանաստեղծություններ-աշուն-մասին/>
- ❖ <https://www.youtube.com/>Տարվա եղանակներ(music and yrics by Anahit Shahzadayan)
- ❖ <https://tzuk.am/category/իմ-մանկության-գույները-բանաստեղծություններ/>
- ❖ <https://www.youtube.com/watch?v=hA3KN05FRFo> /Գարուն երգ կրկներ/
- ❖ <https://www.youtube.com/watch?v=YM6nMQbckEK> /տարվա եղանակներ/

## Եզրակացություն

Վերոգրյալից պարզ դարձավ հետևյալը.

- ✓ Գործնական աշխատանքի հմտությունները չեն ծագում ինքն իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:
- ✓ Գործնական աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու վանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար
- ✓ Գործնական աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի ` արագացնում է սովորողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա
- ✓ Ժամանակի ընթացքում դասերին գործնական աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

## Գրականության ցանկ

1. Թորոսյան Կ., Կ. Չիրուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, Չանգակե հրատարակչություն, 2014 թ.,
2. Խստովինա Ն. Բ., Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2000, էջ 42
3. Կ. Թորոսյան, Կ. Չիրուխյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, Չանգակե հրատարակչություն, 2014 թ., էջ 65,
4. Общие основы педагогики, (под ред Б П Есипова), М. 1967, Голант Е. Я. , Е. И.
5. Петровский, Классификация методов обучения, М .,1964,
6. Лернер И. Я., М. Н. Скаткин, Методы обучения, М .,1994
7. Петровский, Классификация методов обучения, М .,1964, стр. 72,
8. Зи. Я. Лернер, М. Н. Скаткин, Методы обучения, М .,1994, стр. 56,
9. <https://multiurok.ru/files/gortsnakan-met-od.html>